

ՀԱՊՀ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

01.01.2021 - 31.03.2021 ԹԹ.-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունն իր բնականոն գործունեությունն է իրականացրել ՀՀ օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան:

Մասնավորապես.

1. 04.03.2021թ.-ին հարցման միջոցով անցկացվեց արհեստակցական կազմակերպության տարեկան համաժողովը, որի ժամանակ հաստատվեցին Կազմակերպության 2020թ.-ի կանոնադրական և ֆինանսական գործունեության ստուգումների վերաբերյալ Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը, Կազմակերպության 2020թ.-ի տարեկան գործունեության մասին հաշվետվությունը, 2020թ.-ի տարեկան բյուջեի կատարողականը, սեփականության օգտագործման 2020թ.-ի տարեկան հաշվետվությունը, 2021թ.-ի տարեկան բյուջեի նախահաշվի նախագիծը: Համաժողովում հաստատվեցին Կազմակերպության ծրագրերին 2021թ.-ին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները:
2. Արհեստակցական կազմակերպության «Ուրախություն և տոն» ծրագրով, ծննդյան հորեյանական տարեդարձի կապակցությամբ, Կազմակերպության երկու անդամի տրվել է դրամական նվեր:
3. Արհեստակցական կազմակերպության «Ուշադրություն» ծրագրով, Բանակի օրվա կապակցությամբ, Կազմակերպության մեկ անդամի տրվել է դրամական նվեր:
4. Հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեն գումարել է 2 նիստ: